# ԱԼԻԵՎԸ ՔԼԻՆԹՈՆԻՆ ԽՆԴՐԵԼ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՊԱՌԱԶԻՆՄԱՆԸ

Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւը, Չիկագոյում ամփոփելով ԱՄՆ_ում ունեցած իր հանդիպումների արդյունքները, հայտարարել է, թե Քլինթոնը գոհ է մնացել ոչ միայն ԱՄՆ-Թուրքիա փոխհարաբերությունների ներկա վիճակից, այլեւ Ադրբեջան-Թուրքիա փոխհարաբերությունների զարգացումից՝ գրում է Ստամբուլի «Մարմարա» օրաթերթը։

Ըստ օրաթերթի, Ալիեւը հայտնել է, թե ինքը Քլինթոնին եւ ԱՄՆ-ի պաշտպանության նախարարին մանրամասն պատմել է Հայաստանի նպատակասլաց սպառազինման մասին եւ խնդրել է հակազդել այդ գործընթացին։ «Ռուսաստանը ռազմական բազաներ եւ զինվորներ ունի Հայաստանում։ Ո՞ւմ վրա են ցանկանում նրանք հարձակվել, ու՞մ եւ ինչի՞ց են ցանկանում նրանք պաշտպանել»,- հռետորական հարց է նրանց ուղղել Հեյդար Ալիեւը։